

9432



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Շրջակա միջավայրի նախարար  
Հակոբ Սիմիոյան



2024 թ. 08 07

## ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 170 - 24

Նախաձեռնող՝

«ՀԻԴՐՈ» ՍՊԸ

Սյունիքի մարզ, ք. Սիսիան, Շիրվանզադեի փ., 2 5,

Գործունեությունը՝

Վաղապիսի ավազակոպճային խառնուրդի  
հանքավայրի արդյունահանում

Սյունիքի մարզ

Առդիր՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ  
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 170 - 24

«27» 08 2024թ.

Սյունիքի մարզի Վաղատինի ավազակոպճային խառնուրդի հանքավայրի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝

«ՀԻԴՐՈ» ՍՊԸ

Ներկայացված նյութեր՝

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն նախագծային փաստաթղթեր

Գործունեության տեսակը՝

/Ա կատեգորիա/

Գտնվելու վայրը՝

Սյունիքի մարզ, Սիսիան համայնք,  
Վաղատին բնակավայր

**Ներածական մաս.** Վաղատինի ավազակոպճային խառնուրդի հանքավայրը գտնվում է Սյունիքի մարզի Սիսիան համայնքի Վաղատին բնակավայրի վարչական տարածքում:

Մոտակա բնակավայրերն են Նորավան, Գորայք, Ծղուկ, Անգեղակոթ, Սառնակունք, Շաքի բնակավայրերը: Հանքավայրը Վաղատին բնակավայրից գտնվում է 1.5 կմ հեռավորության վրա:

Հայցվող տարածքը ներկայացված է Վաղատին բնակավայրի գյուղատնտեսական նպատակային նշանակության այլ հողերով (կադաստրային ծածկագրեր 09-089-0106-0001 և 09-089-0106-0209):

Նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Ա կատեգորիայի գործունեության տեսակ՝ համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի (ՀՕ-110-Ն) 14-րդ հոդվածի 4-րդ մասի 2)-րդ կետի գ. ենթակետի:

**Նկարագրական մաս.** Հանքավայրի պաշարները հաստատվել են ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2022 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 3550-Ա հրամանով ըստ A և B կարգերի 662.252 հազ.մ<sup>3</sup> քանակով:

Պաշարները հաստատվել են որպես.

-խճի արտադրության հումք՝ ՀՍ ԳՈՍՍ 8267-95 «Խիճ և կոպիճ խիտ լեռնային ապարներից շինարարական աշխատանքների համար»,



-շինարարական ավագի արտադրության հումք՝ ավագը ջրով լվանալուց հետո. ԳՈՍՏ 8736-2014 «Ավագ շինարարական աշխատանքների համար»:

Բացահանքում արդյունահանումը կատարվելու է առանց հորատապայթեցման աշխատանքների կիրառման էքսկավատոր-ավտոինքնաթափ լեռնատրանսպորտային համալիրի միջոցով:

Հայցվող՝ 2.64 հա մակերեսով տարածքի օգտակար հանածոյի (մարվող) պաշարների եզրագծի կորդինատները ARM WGS-84 կորդինատային համակարգով հետևյալներն են.

1. Y = 8596337.00	X = 4377336.00
2. Y = 8596429.00	X = 4377478.00
3. Y = 8596477.00	X = 4377662.00
4. Y = 8596554.00	X = 4377478.00
5. Y = 8596538.98	X = 4377459.53
6. Y = 8596517.91	X = 4377481.89
7. Y = 8596482.87	X = 4377436.42
8. Y = 8596460.08	X = 4377408.80
9. Y = 8596463.16	X = 4377366.29
10. Y = 8596406.00	X = 4377296.00

Նախագծով նախատեսվում է՝

տեղամասը շահագործել բաց եղանակով տարեկան 33112.6 մ<sup>3</sup> արտադրողականությամբ /մարվող պաշար/,

- արդյունահանվող պաշարների քանակը կազմում է 432.2 հազ. մ<sup>3</sup>, տարեկան 22000 մ<sup>3</sup> ծավալով ԱԿԽ զանգված,

- հանույթային աշխատանքները կատարվելու են էքսկավատոր - ավտոինքնաթափ լեռնատրանսպորտային համալիրով,

- բացահանքի աշխատանքների կազմակերպման համար հանքավայրում նախատեսվելու է արտադրական հրապարակ իր անհրաժեշտ կառույցներով,

շահագործման ավարտից հետո կատարվելու է բացահանքի հատակի և արտաքին լցակույտի մակերևույթի ռեկուլտիվացիա:

Նախագծվող բացահանքը վերջնական դիրքում ունի հետևյալ պարամետրերը.

- ամենամեծ երկարությունը՝ 306 մ,

- ամենամեծ լայնությունը՝ 182 մ,

- բացահանքի ամենամեծ խորությունը՝ 58.5 մ,

- մակաբացման պարների միջին հզորությունը - 5.0 մ, այդ թվում՝ փխրուն /հողաբուսական շերտ/

- 0.2 մ, բեկորային - 4.8 մ,

- ծառայման ժամկետը 20 տարի:

Շահագործման 1-9 տարիների բացահանքի հանքաստիճանների բացումը կատարվելու է հանքավայրի հարավ-արևմտյան մասից մոտեցող գոյություն ունեցող բնահողային ավտոճանապարհից դեպի 1794.7 մ բարձրության նիշ ունեցող հանքաստիճան՝ թեք մոտեցող կիսախրամի անցումով:

Շահագործման 9-20 տարիների բացահանքի հանքաստիճանների բացումը կատարվելու է հանքավայրի հարավ-արևմտյան մասից մոտեցող գոյություն ունեցող նույն բնահողային



ավտոճանապարհից դեպի 1804.7 մ բարձրության նիշ ունեցող հանքաստիճան՝ թեք մոտեցող կիսախրամի անցումով:

Շահագործման 1-9 տարիների մակաբացման ապարները՝ 69695 մ<sup>3</sup> ծավալով, այդ թվում՝ 3774 մ<sup>3</sup> փխրուն ապարներ և 65921 մ<sup>3</sup> բեկորային ապարները տեղափոխվելու են բացահանքի հյուսիս-արևելյան մասում ձևավորվող արտաքին լցակույտ և պահեստավորվելու են առանձին-առանձին:

Շահագործման 9-20 տարիների բացահանքի մակաբացման ապարները՝ 59246 մ<sup>3</sup>, այդ թվում՝ 2000 մ<sup>3</sup> փխրուն ապարներն ու 57246 մ<sup>3</sup> բեկորային ապարները տեղափոխվելու են վերը նշված արտաքին լցակույտ: Այսպիսով, արտաքին լցակույտ է տեղափոխվելու 128 941 մ<sup>3</sup> մակաբացման ապար, որից 5774 մ<sup>3</sup> փխրուն ապարներ, 123167 մ<sup>3</sup> բեկորային ապարներ: Արտաքին լցակույտի հիմքի մակերեսը կազմում է 22965 մ<sup>2</sup>, վերևի հարթակի մակերեսը՝ 12874 մ<sup>2</sup>, լցակույտի առավելագույն բարձրությունը՝ 28 մ:

Մնացած մակաբացման ապարները՝ 24599 մ<sup>3</sup> ծավալով, այդ թվում՝ 491 մ<sup>3</sup> փխրուն ապարները 24108 մ<sup>3</sup>, բեկորային ապարները տեղափոխվելու են 1-9 տարիների ընթացքում մշակված բացահանքի տարածքի 1754.7 մ նիշ ունեցող հորիզոն (բացահանքի հատակ) և ձևավորվելու է ներքին լցակույտ: Բեկորային մակաբացման ապարների ներքին լցակույտի հիմքի մակերեսը կազմում է 6890 մ<sup>2</sup>, վերևի հարթակի մակերեսը 3401 մ<sup>2</sup>:

Ներքին լցակույտի ձևավորմանը զուգահեռ իրականացվելու է արտաքին լցակույտի վերին հարթակի ռեկուլտիվացիա, որի ընթացքում վերին հարթակում կուտակված փուխր ապարները բուլդոզերի միջոցով փռվելու են վերին հարթակի ամբողջ մակերևույթով՝ 0.5 մ շերտով:

Հանույթային և բարձման աշխատանքների իրականացման համար նախատեսված է 2.1 մ<sup>3</sup> շերտի տարողությամբ HYUNDAI R320LC-9 մակնիշի հակառակ թիով էքսկավատոր:

Բացահանքի ջրամատակարարումը տեխնիկական ջրով իրականացվելու է KO-002 (ZIL-431412) մակնիշի ջրցան-վազող ավտոմեքենայով: Խմելու ջրի մատակարարումը կատարվելու է ջրի ցիստեռնով:

Բացահանքում արդյունահանման աշխատանքներն ավարտելուց հետո, վերականգնումը/ռեկուլտիվացիան կկատարվի արդյունաբերական հրապարակում 0.0195 հա, արտաքին լցակույտի վերին հարթակում 1.29 հա և բացահանքի հատակում՝ 1.59 հա մակերեսով, ընդհանուր՝ 2.899 հա մակերեսում:

Լեռնատեխնիկական ռեկուլտիվացիայից հետո իրականացվելու է կենսաբանական ռեկուլտիվացիա:

Ամբողջ ռեկուլտիվացիայի արժեքը կկազմի 660640 ՀՀ դրամ, որից կենսաբանական ռեկուլտիվացիայի համար նախատեսվել է 356.9 ՀՀ դրամ:

Շահագործման 20 տարիների ընթացքում բնապահպանական միջոցառումների համար նախատեսվելու է շուրջ 66402.64 հազ. ՀՀ դրամ:

Ըստ հաշվետվությունում ներկայացված տեղեկատվության՝ հանքավայրի տարածքում ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում գրանցված տեսակներ չեն արձանագրվել:

Վաղատինի հանքավայրի տարածքը ներառված չէ, կամ սահմանակից չէ բնության հատուկ պահպանվող տարածքի սահմաններին: Հանքավայրի տարածքում բնության հուշարձաններ հաշվառված չեն: Սյունիքի մարզի ամենամոտ գտնվող պատմության և մշակույթի անշարժ հուշարձանները Վաղատինի հանքավայրի տարածքից գտնվում են նվազագույնը 2.26 կմ հեռավորության վրա:



**Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.**

- նավթամթերքների, դրանց մնացորդների պահեստավորվելու և պահվելու են արտադրական հրապարակում, հատուկ հատկացված տեղում (բացօթյա կամ ծածկի տակ պահեստ),
- թափոնները՝ որպես քսանյութ կամ վառելանյութ, պարբերաբար տեղափոխվելու են վերամշակում իրականացնող կազմակերպությունների տարածք,
- կենցաղային աղբը տեղափոխվելու է մոտակա աղբավայր՝ կնքված պայմանագրի հիման վրա,
- լեռնատրանսպորտային միջոցների վրա նախատեսվում է տեղադրել արտաթորվող թունավոր նյութերի չեզոքացուցիչ սարքեր,
- փոշենստեցման նպատակով իրականացվելու է տեղամասին մոտեցող ճանապարհի ջրում տարվա չոր և շոգ եղանակներին,
- արտադրական տարածքը կանաչապատվելու է թփերով և գաճաճ ծառատեսակներով,
- բացահանքերի շահագործման ավարտից հետո նախատեսվում է իրականացնել խախտված տարածքների ռեկուլտիվացիա:

Հանքավայրի շահագործման ընթացքում իրականացվելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն ու մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.


- մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ շաբաթական մեկ անգամ,
- օգտագործված մեքենաների յուղերով ու քսայուղերով արդյունաբերական հրապարակի տարածքի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով նախատեսվում է իրականացնել մշտադիտարկումներ՝ ամսական մեկ անգամ,
- լցակույտում պահեստավորված հողերի քիմիական կազմի և հումուսի պարունակության մշտադիտարկում՝ տարեկան մեկ անգամ,
- աղմուկի վերահսկողություն՝ տարեկան մեկ անգամ,
- կենսաբազմազանության ուսումնասիրություն, նկարագրում՝ տարածքին բնորոշ վայրի բնության ներկայացուցիչների քանակի, աճելավայրերի և ապրելավայրերի տարածքի, պոպուլյացիայի փոփոխության (դիտարկումը կատարվելու է հանքավայրում և հարակից տարածքներում:)

Մշտադիտարկման նպատակով ընկերությունը տարեկան մասնահանելու է 1885.0 հազ. ՀՀ դրամ:

**Պատճառաբանական մաս.** Օրենսդրությամբ սահմանված կարգով՝ փորձաքննության գործընթացում Սյունիքի մարզի Սիսիան համայնքի Վաղատին բնակավայրում անցկացված հանրային քննարկման ընթացքում գործունեության իրականացումը տեղական ինքնակառավարման մարմնի մասնակիցների կողմից արժանացել է հավանության:

Հաշվետվության վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ ներքին գործերի, առողջապահության, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, կադաստրի կոմիտեից, Սյունիքի մարզպետարանից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից:

Հանրային քննարկման ընթացքում քննարկվել է տարածքից 50 մ հեռավորության վրա գտնվող (ըստ ընկերության կողմից ներկայացված տեղեկատվության) Վաղատին բնակավայրի խմելու ջրի քանդված կապտաժային կառուցվածքի և վերջինիս վրա արդյունահանման աշխատանքների հնարավոր բացասական ազդեցության հարցը: Նշվածի վերաբերյալ ներկայացվել էր նաև կարծիք



Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի կողմից: Քննարկման ընթացքում Ընկերությունն իր պարտավորությունը հայտնեց վերանորոգելու քանդված կապտաժի արտաքին պատերը՝ ապահովելու նպատակով այդ կառույցը հնարավոր աղտոտումից: Միաժամանակ քննարկման ընթացքում նշվեց և մարզպետարանի լրացուցիչ գրությամբ հաստատվեց այն փաստը որ Վաղատին բնակավայրի ամբողջական խմելու ջրի ջրամատակարարումը նախատեսված է իրականացնել բնակավայրից 700-800մ հեռավորության վրա գտնվող Ջոր-գոր ակունքից, ինչը ներկայումս կառուցման փուլում է:

Ամփոփելով հաշվետվության բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք կառաջանան նախատեսվող գործունեության աշխատանքների իրականացման արդյունքում, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

### Փորձաքննական պահանջներ

Հանքարդյունահանման աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է առաջնորդվել Կառավարության 2018 թվականի փետրվարի 22-ի 191-Ն որոշման պահանջներով, շրջակա միջավայրի բաղադրիչների /մթնոլորտային օդ, հողային ծածկույթ, կենսաբազմազանություն/ մշտադիտարկումների արդյունքների տարեկան հաշվետվությունը նշված որոշմամբ սահմանված ժամկետներում և ձևաչափով ներկայացնել լիազոր մարմին:

- Հանքավայրի շահագործման ընթացքում անհրաժեշտ է ապահովել և պահպանել բնապահպանական կառավարման պլանում և մշտադիտարկման ծրագրում նախատեսված միջոցառումների իրականացումը:

- Հանքավայրից 50 մ հեռավորության վրա գոյություն ունեցող կապտաժային կառույցը հնարավոր աղտոտումից պահպանելու համար, անհրաժեշտ է Ընկերության կողմից վերանորոգել այն՝ ապահովելու նպատակով կապտաժի համար սանիտարական գոտու պայմանները:

- ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» N438 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի համաձայն՝ աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ տեղեկացնել լիազորված մարմին՝ համապատասխան պահպանման միջոցառումներ իրականացնելու համար:

### ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ՄԱՍ

«ՀԻԴՐՈ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Սյունիքի մարզի Վաղատինի ավազակոպճային խառնուրդի հանքավայրի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման



հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝



Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝

Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ՝

Գոհար Մինասյան